

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
6-ԻՆ ԺԱՄԱՆ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԱԿՑՈՒԹՅԱՆ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ա. Դարբինյան	ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Հ. Մկրտչյան	ՀՀ վարչապետի օգնական
Ս. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Ռ. Թովչյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Ռ. Սուքիասյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ
Վ. Թովսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ
Հ. Մաղաքյան	«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի տնօրենի պաշտոնակատար
Ա. Հակոբյան	«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի փորձագետ

ՀՀ բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարության նախագծի
քննարկում

(Ա. Աշոտյան, Վ. Գաբրիելյան, Ա. Հակոբյան, Տ. Սարգսյան)

1. ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանը ներկայացրեց բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարության նախագիծը, որը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմում, ինչպես նաև ներգրավել են համապատասխան փորձագետներ վարկային ծրագրերի շրջանակում: Նշեց ֆինանսավորման ռազմավարության նախագծի նպատակները՝

1) բարձրագույն կրթության որակի և համապատասխանության բարելավմանն աջակցելը.
2) կրթության մատչելիության աստիճանը բարձրացնելը և անհավասարությունները մեղմելը.

3) ոլորտի արդյունավետության բարձրացմանն աջակցելը:

Անդրադառնալով բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգին՝ ներկայացրեց ուսանողի և բուհի ֆինանսավորման առաջարկվող ծրագրերի տարբերակները՝

1) մասնագիտական կրթաթոշակային.
2) ուսանողների ֆինանսական օգնության.
3) ուսանողական նպաստներ սոցիալապես խոցելի խմբերին.
4) բուհերի յուրաքանչյուր կուրսի յուրաքանչյուր մասնագիտության գծով մեկական անվանական կրթաթոշակի սահմանում.

5) ուսանողական վարկերի համակարգի ներդրման ծախսերի ֆինանսավորում.

6) բուհերի ֆինանսավորում՝ ըստ կատարողականի.

7) բուհերի կապիտալ ծախսերի ֆինանսավորում.

8) բուհերի զարգացման (որակի ապահովում, նորարարություններ, արդյունավետության բարձրացում) ծրագրերի ֆինանսավորում:

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ վերանայել բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարության նախագիծը, ելնելով նիստի քննարկումների արդյունքներից և առաջարկված լուծումներից, մասնավորապես՝

1) պետպատվերով ֆինանսավորվող մասնագիտությունների ցանկը կորոշվի պետության կողմից, ուսումնասիրելով աշխատանքի շուկայի պահանջարկը տվյալ մասնագիտությունների նկատմամբ.

2) ռազմավարության նախագծի 3-րդ գծապատկերի (պետության կողմից բարձրագույն կրթության ֆինանսավորման գործող և առաջարկվող համակարգերը) «պահանջարկի (ուսանողի) ֆինանսավորում» սյունակի «ուսանողների ֆինանսական օգնության ծրագիր» և «ուսանողական վարկերի համակարգի ներդրման ծախսերի ֆինանսավորում» տողերը հանել, փոխարենը բուհական կրթության հասանելիությունն ապահովելու նպատակով նախատեսել ուսման վարձերի աջակցության հիմնադրամի ստեղծում՝ պետության, դոնորների և այլ սպոնսորների հետ համատեղ: Այն ուսանողներին, ովքեր ֆինանսական ինստիտուտներից (բանկերից) կվերցնեն վարկ՝ ուսման վարձը վճարելու համար, պետությունը կսուբսիդավորի վարկերի տոկոսադրույքը.

3) բանակում ծառայած ուսանողներին ցուցաբերել ֆինանսական օժանդակություն.

4) հատկացնել ուսանողական նպաստներ սոցիալապես խոցելի խմբերին.

5) սահմանել մասնագիտական կրթաթոշակային ծրագիր.

6) ռազմավարության նախագծի 3-րդ գծապատկերի «առաջարկի (բուհի) ֆինանսավորում» սյունակը հանել՝ դրանով նախատեսված ծախսերն իրականացնելով առանձին ծրագրերով, պետության հնարավորությունների սահմաններում: